

**«ՍԻՐԻԱԿԱՆ ՎՃԱՐՆԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ Է ԼԻՆԵԼՈՒ».
ԱՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆ**

10.10.2014 12:00



Սիրիայի հակամարտության արդյունքում ավելի քան 9 մլն. մարդ է տեղահանվել երկրից, որոնց թվում մեր հայրենակիցները: Ավելի քան 16.000 հայեր պաշտպանություն են փնտրել Հայաստանում: Ծիշտ է Հայաստանի Հանրապետության պետական մարմինները առավել լավ պայմաններ են ապահովել սիրիահայերի համար, սակայն չեն բացառվել նրանց իրավունքների խախտման դեպքերը, ինչպես պետական մարմինների, այնպես էլ քաղաքացիների հետ փոխհարաբերություններում: Մամուլում լայն արձագանքներ գտան սիրիահայերի իրավունքների խախտումների դեպքերը:


Այդ դեպքերից ելնելով, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը 2014 թվականի փետրվարին իր միջոցներով սկսել էր «Սիրիահայերին իրավական աջակցություն» փաստաբանական ծրագիրը:


Ծրագրով նախատեսվում էր սիրիահայերին իրավաբանական խորհրդատվությամբ ապահովել: Ծրագրի համակարգողը ՓՊ նախագահի ծրագրերի գծով խորհրդական Զինավոր Մեղրյանն է:

Ծրագրի շրջանակներում շուրջ 60 սիրիահայեր ապահովվել են համապատասխան բանավոր և գրավոր խորհրդատվություններով, այդ թվում՝ հայցադիմումներ են կազմվել և ներկայացվել դատարաններ:

Ծրագրի երկրորդ փուլին իր աջակցությունն է առաջարկել Միացյալ ազգերի կազմակերպության փախստականների գծով Գերագույն Հանձնակատարի (ՄԱԿ ՓԳՀ) հայաստանյան գրասենյակը և երկու կազմակերպությունների համագործակցության արդյունքում ստեղծվել է «Հաճախ տրվող իրավական հարցերի տեղեկատվական ձեռնարկը»: Ձեռնարկը կազմվել է արևմտահայերենով, արևելահայերենով, անգլերեն և արաբերեն լեզուներով: Ձեռնարկում ամփոփվել են այն հնարավոր հարցերը, որոնց կարող է առնչվել ցանկացած անձ, ով Հայաստան է ժամանել՝ ժամանակավոր կամ մշտական հիմունքներով: Այսօր, 2014թ. հոկտեմբերի 10-ին, ՀՀ փաստաբանների պալատը և Միացյալ ազգերի կազմակերպության փախստականների գծով Գերագույն Հանձնակատարի (ՄԱԿ ՓԳՀ) հայաստանյան գրասենյակը կազմակերպել էին Սիրիայից Հայաստան տեղահանված անձանց համար նախատեսված «Հաճախ տրվող իրավական հարցերի տեղեկատվական ձեռնարկի» շնորհանդեսը: Ելույթ ունեցան ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը և ՄԱԿ ՓԳՀ

ներկայացուցիչ Քրիստոֆ Բիրվիրթը:
ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը, ողջունելով ներկաներին՝ հայտնել է, որ սիրիահայերին իրավական օգնության տրամադրումը շարունակական է լինելու: «Գաղափարի իրագործումը կատարվել է Պալատի ռեսուրսների հաշվին, իսկ երկրորդ փուլում այս գործին միացավ ՄԱԿ-ի փախստականների գծով Գերագույն Հանձնակատարի (ՄԱԿ ՓԳՀ) հայաստանյան գրասենյակը՝ օժանդակելով ձեռնարկի հրատարակությանը», -նշել է Փաստաբանների պալատի նախագահը:
Տեղում հնչեցին հարցեր, որոնց պատասխանեց ՓՊ նախագահի ծրագրերի գծով խորհրդական Զինավոր Մեղրյանը:
Ըստ Մեղրյանի սիրիահայերի խնդիրները առնչվել են մոլոտքի վիզայի տրամադրման ընթացակարգերին, քաղաքացիության ստացմանը, սոցիալական իրավունքներին և մաքսային ու հարկային օրենսդրությանը առնչվող հարցեր:
ՄԱԿ ՓԳՀ ներկայացուցիչ Քրիստոֆ Բիրվիրթը նշել է, որ ցանկանում են Փաստաբանների պալատի հետ համագործակցել փախստականների իրավունքներին առնչվող հարցերով:





```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" &&
parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```